ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ք. Աշտարակ 2025թ. հուլիսի 15 -ին, N 253 -Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՐՈՒՃԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՓԻՆԵ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ, 163-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի 61-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Արուճի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արփինե Մելիքսեթյանի 2025 թվականի հուլիսի 14-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Արուճի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արփինե Մելիքսեթյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդի մասը 2024-2025 թվականների ուսումնական տարվա համար 15 աշխատանքային օր տևողությամբ՝ 2025 թվականի հուլիսի 21-ից օգոստոսի 8-ը ներառյալ:
2. Արփինե Մելիքսեթյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արուճի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել «Արուճի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության զինղեկ Սիրեկան Հայրապետյանին:
3. Արփինե Մելիքսեթյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի օգոստոսի 11-ից:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
3510860535

X

Պարտականությունները կատարող՝ Signed by: GRIGORYAN ARMEN 3510860535

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ